

# «ՀԱՂԱՐԾԻՆ ԷՔՍՏՐԻՄ» ՍՊԸ


ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՉԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԹԵՂՈՒՏԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ  
ՃՈՊԱՆԻ/ԶԻՓԼԱՅՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

լրամշակված

«ՀԱՂԱՐԾԻՆ ԷՔՍՏՐԻՄ» ՍՊԸ տնօրեն



Սևակ Թամրազյան



# Բովանդակություն

Էջ

1. Ընդհանուր տեղեկատվություն .....	3
2. Օգտագործվող հապավումները.....	4
3. Հավելվածներ.....	4
4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ .....	8
6. Նախաձեռնողի անվանումը, գործունեության գտնվելու վայրը, իրականացման նպատակը. ....	9
7. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.....	10
8. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը.....	10
8.1 Ենթակա տարածք.....	10
8.2 Շրջակա միջավայրի և «Դիլիջան» ազգային պարկի և համառոտ նկարագիրը.....	13
9. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման , փակման փուլեր).....	40
9.1 Շահագործման փուլ.....	41
9.2 Շինարարության փուլ.....	41
10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	42
10.1 Ջուր.....	42
10.2 Նյութեր.....	43
11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը.....	43
(շինարարության և շահագործման փուլ).....	43
11.1 Օդային ավազան .....	44
11.2 Հողային ռեսուրսներ .....	45
11.3 Ջրային ռեսուրսներ.....	45
11.4 Կենսաբազմազանություն.....	45
11.5 Թափոններ.....	47
11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	48
11.7 Աղմուկ և թրթռում.....	48
11.8 Արտակարգ իրավիճակներ.....	49
11.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.....	49
11.10 Սոցիալական.....	49
11.11 Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում.....	50
12. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը,	

նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան).....	50
12.1.Օդային ավազան.....	50
12.2.Հողային ռեսուրսներ.....	51
12.3.Ջրային ռեսուրսներ.....	51
12.4.Կենսաբազմազանություն.....	51
12.5.Թափոններ.....	52
12.6. Պատմամշակութային հուշարձաններ.....	52
12.7.Աղմուկ և թրթռում.....	52
12.8.Արտակարգ իրավիճակներ.....	53
12.9.Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.....	53
12.10.Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում.....	54
13. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը.....	55
(Մոնիթորինգ).....	55
14.Բողոքների ընթացակարգ.....	56
15.Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.....	57
16.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	68
Աղյուսակ 10.....	68
17. Հանրային քննարկումներ.....	71
18.Փակման փուլ.....	71

## 1.Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտի բնակավայրի վարչական տարածքում միաճոպան կախովի մարդատար ճոպանի/զիփլայն/կառուցում
Նախաձեռնող	«ՀԱՂԱՐԾԻՆ ԷՔՍՏՐԻՄ» ՍՊԸ
Նախաձեռնողի իրավաբանական հասցեն	ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, գ. Թեղուտ 3-րդ փող. 6 փակուղի, տուն 6

Նախատեսվող գործունեության վարչական տարածքը, փաստացի գործունեության հասցեն	Տավուշի մարզի Դիլիջան համայնքի գ. Թեղուտ
Գնահատման հաշվետվության մշակող	«Նովալ» ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 noval.llc.noval@gmail.com

## 2. Օգտագործվող հապավումները

- ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում  
 ԲՀՊՏ՝ Բնության հատուկ պահպանվող տարածք  
 ԲՀՀ՝ Բնության համաշխարհային հիմնադրամ  
 ԲՊՄՄ՝ Բնության Պահպանության Միջազգային Միություն  
 ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն  
 ԱՊ՝ Ազգային պարկ  
 ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն  
 ՊՏ՝ Պահպանվող տարածք  
 ԴԱՊ՝ «Դիլիջան» Ազգային պարկ  
 ԿՊ՝ «Դիլիջան» ազգային պարկի Կառավարման պլան

## 3. Հավելվածներ

- Հավելված 1.** Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի վկայականները  
**Հավելված 2.** ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Դիլիջան ազգային պարկ ՊՈԱԿ-ի համաձայնությունները, պայմանագիրը  
**Հավելված 3.** Գործունեության ենթակա տարածքի կոորդինատները  
**Հավելված 4.** Զիփլայնի որպես վտանգավորության օբյեկտի վկայականը  
**Հավելված 5.** Զիփլայնի Գլխավոր հատակագիծը  
**Հավելված 6.** ԿԳՄՄ նախարարության դրական կարծիքը  
**Հավելված 7.** Դիլիջան քաղաքի պատմամշակութային հուշարձանների ցանկը  
**Հավելված 8.** Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկը, թերթի ծանուցումը  
**Հավելված 9.** Դիլիջանի համայնքի Ավագանու նախնական համաձայնությունը  
**Հավելված 10.** Պետական տուրքի անդորրագիրը  
**Հավելված 11.** ԱՊ-ի Կենսաբազամազանության ուսումնասիրություն  
**Հավելված 12.** Աղմուկի մակարդակի գնահատում:

#### 4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121-Ն՝ ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.ՀՕ-522-Ն)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006 թ.) -կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» օրենք (2015 թվականի հունիսի 23-ին) Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքային բնակավայրի (այսուհետ՝ Դիլիջան քաղաքային բնակավայր և հարակից տարածքների (այսուհետ՝ Տարածք) զարգացման և ներդրումային ծրագրերի խրախուսման ու իրականացման նպատակով ներդրումային ծրագրերի հաստատման և իրականացման կարգը, ինչպես նաև Դիլիջան համայնքի քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, քննարկման և հաստատման, քաղաքաշինական գործունեության իրականացման

առանձնահատկությունները, տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները՝ հիմնված պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքի վրա:

**«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.)** – սահմանում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

**«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)** – ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և գենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

**«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)** – սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.)** - սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը,

հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

**«ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)** – Նպատակն է ազգային ջրային պաշարի պահպանությունը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարումը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովումը, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը: Կարգավորում է ջրային հարաբերությունները, Սևանա լճի կառավարման և պահպանության հարցերը: Ապահովում է ջրերի պահպանությունը, պաշտպանությունը վնասակար ազդեցությունից, օգտագործումը հանրության շահերի համար՝ հանուն բոլոր անձանց անվտանգության:

**«Հողերի օգտագործման եվ պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)** - սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)**-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

**«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)**- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)**-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

**«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.)** -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու

իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

### **ՀՀ կառավարության որոշումներ**

❖ **ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ.** «Հայաստանի հանարապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ.** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում :

❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ.** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 31.07.2014թ.** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 14.08.2008թ.** «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 02.11.2017թ.** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1404-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 08.11.2011թ.** ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՄԱՆ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1396-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ.** «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշում:

## **5.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ.**

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023թ)Օրենքի(այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև



իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի, գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի և ենթակետի ռեկրացիայի և զբոսաշրջության բնագավառներում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «ա. դահուկուղիներ, ճոպանուղիներ, զիփլայն (ճախրուղի) և հարակից ենթակառուցվածքներ.»:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի և ենթակետի սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությունը կազմվել է Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթների պահանջներին համապատասխան, հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված:

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է Օրենքի 15-րդ հոդվածի՝ Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան:

## **6. Նախաձեռնողի անվանումը, գործունեության գտնվելու վայրը, իրականացման նպատակը.**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Հաղարծին Էքստրիմ» ՍՊԸ-ի՝ կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնք, գ. Թեղուտ 3-րդ փող. 6 փակուղի, տուն 6: Գործունեությունն իրականացվելու է 0.00192 հա, 0.002հա, 0.0012հա տարածքների վրա:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է հողամասի կառուցապատման իրավունքով: Նախատեսվող գործունեության հողի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնապահպանական:

**Նախատեսվող գործունեության նպատակը.** Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի տարածքում զիփլայնի վերակառուցումն՝ է զբոսաշրջության զարգացման նպատակով: Համաձայն «Դիլիջան» ԱՊ-ի և «Դիլիջան» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-ի կանոնադրության՝ կազմակերպությունն իրավունք ունի ռեկրեացիայի նպատակով իր տարածքում՝ հողերը սահմանված կարգով վարձակալության տրամադրել՝ քաղաքացիների երկարատև և կարճատև հանգիստը կազմակերպելու համար:

## 7. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.

Կառուցման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի վկայականները՝ N 11072023-11-0050, N 11072023-11-0051, N 11072023-11-0052:

- Կառուցապատման նախագծային փաստաթուղթը:

- Համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:

Զիվլայնի կառուցման նախագիծն իրականացվում է՝ համաձայն Պատվիրատուի առաջադրանքի և համապատասխանում է ՀՀ գործող նորմերին և տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

## 8. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը.

8.1 Ենթակա տարածք, նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական հատվածում՝ «Դիլիջան»ԱՊ-ի տարածքում:

Նկար 1.









Նախատեսվող գործունեության տարածքը Մ-4 միջպետական ավտոճանապարհից գտնվում է 3,8 կմ հեռավորության վրա, Թեղուտ գյուղի մոտակա բնակելի տնից՝ 3,6 կմ հեռավորության վրա: Տարածքի 1-ին և 4-րդ թռիչքակետերը Հաղարծին գետից գտնվում են 110մ, 3-րդ կայանից 181մ, 2-րդ կայանից 124մ հեռավորությունների վրա: Հանրապետական ավտոճանապարհից 1-ին և 4-րդ թռիչքակետերը գտնվում են 154մ, 3-րդ թռիչքակետը՝ 117մ, 2-րդ թռիչքակետը՝ 80մ հեռավորությունների վրա:

Համաձայն «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2017-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 23 փետրվարի 2017 թվականի N 190-Ն որոշմանը (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112007>) կից քարտեզների ուսումնասիրության տարածքը գտնվում է ռեկրիացիոն գոտում և «Հաղարծնի հաճարկուտներ» արգելոցից հեռու է մոտ 600 մ: Տարածքից 257 մ հեռավորության վրա գտնվում է Հաղարծին

վանական համալիրը: 327-402մ հեռավորությունների վրա տեղակայված են հանգստի գոտիներ: Տարածքին կից առկա է հասարակական գուգարան, մոտ 200մ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված է: Դեռևս խորհրդային տարիներից տարածքում տեղադրված են հենասյուներ, ինչպես նաև ճոպանուղու կայաններ, որոնք այդպես էլ չեն գործել: Ընկերությունը նախատեսում է վերակառուցել և գործարկել զիֆլայնը, անվտանգության բոլոր պահանջներին համապատասխան: Համաձայն գործունեության տարածքում կատարված ուսումնասիրության՝ հարակից տարածքն անտառապատ է՝ բուսածածկով: Գործունեության անմիջական հարևանությամբ հանդիպում են անտառներ, տերևավոր նոսրանտառներ, իսկ ինտրոզոնալ բուսականությունից՝ պետրոֆիլ բուսականություն: Գործունեության ենթակա տարածքում կենդանական աշխարհի բնադրավայրեր և միգրացիոն ուղիներ, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվող գործունեության ճարտարապետահատակագծային լուծումներն այնպես են տրված, որպեսզի ծառեր չհատվեն, բուսական աշխարհին որևէ վնաս չպատճառվի:

Գործունեության ենթակա տարածքում մակերեսային ջրային ռեսուրսներ չկան: Տարածքում բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման համակարգերը:

Գործունեության ենթակա տարածքների հողային տիպը անտառային մուգ դարչնագույն, չափավոր խոնավ հողերն են: Հողաշերտի հզորությունը կախված ռելիեֆի պայմաններից տատանվում է 15-50սմ-ի սահմաններում:

Գործունեության ենթակա տարածքներում պատմամշակութային և բնական հուշարձաններ չկան: Ամենամոտ պատմամշակութային հուշարձանը Հաղարծին վանական համալիրն՝ 257մ հեռավորության վրա: Ելնելով ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի պահանջներից, շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, ընկերությունը դադարեցնելու է շինարարական աշխատանքերը, վերջինիս մասին հայտնելով լիազոր մարմնին:

Գործունեության տարածքին հարակից՝ մոտ 3,6 կմ հեռավորության վրա գտնվում են բնակելի տներ:

**8.2. Շրջակա միջավայրի և «Դիլիջան» ազգային պարկի և համառոտ նկարագիրը.**

**8.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ.** Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի համայնքի Թեղուտ բնակավայրի տարածքում՝ «Դիլիջան» ազգային պարկի հատվածում: Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-



հանդիպում են գրեթե բոլոր երկրաբանական ժամանակաշրջանների ապարներ: Մակայն առավել տարածված են յուրայի, վերին կավճի, էոցենի, օլիգոցե-միոցենի ու չորրորդական հասակի ապարների գոյացումները: Տարածքում կան մետաղական և ոչ մետաղական բազմաթիվ և բազմատեսակ հանքավայրեր: Մետաղներից՝ ծարիրի, պղնձի, գունավոր ու թանկարժեք այլ տարրերի, երկաթի ու մանգանի հանքավայրեր, իսկ ոչ մետաղային հանածոներից՝ կրաքար, ավազ, դոլոմիտ, խիճ, գլաքար, կավ, պորֆիրիտ, ավազաքար և այլ շինանյութերի հանքավայրեր:

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները, ներառյալ Աղստև գետի ավազանը, աչքի են ընկնում սողանքների հաճախականությամբ և ինտենսիվությամբ, որոնք ազդում են ռելիեֆի ձևավորման վրա: Փամբակի լեռնաշղթայի հատվածներում՝ Դիլիջանում խոշոր սողանքները շատ տարածված են: Սողանքները տարածված են նաև Հաղարծինի, Պարզ լճի, Ֆիոլետովոյի շրկայքում: Դիլիջան քաղաքը գտնվում է 0.2–0.3 g սեյսմիկ միկրոշրջանցման գոտում:

Հայաստանի հյուսիս-արևելքում և Աղստև գետի ավազանում (հարավային մասերում) տարածված են նաև սելավները, որոնք բնորոշվում են զառիթափերի ոչ բավարար խոնավացմամբ, ջերմաստիճանի և խոնավացման գործոնների կտրուկ տատանումներով, համեմատաբար թույլ վեգետատիվ ծածկի առկայությամբ, նստվածքային նյութերի ինտենսիվ հողմահարմամբ և կուտակմամբ:

Կլիմայական պայմանների փոփոխությունները, ջրառատ անձրևների ակտիվությունը, բավարար խոնավությունը, գրունտային ջրերը, խիստ թեքությունները, նախալեռների լվացումը, ուժեղ նստվածքները, անտառային ծածկի կրճատումը, երոզիոն գործընթացները, ինչպես նաև բնական լանդշաֆտների խախտումը և մարդածին գործողությունները նպաստում են սողանքների և սելավների էլ ավելի ակտիվացմանը:

### **8.2.3 Կլիման և օդային ավազանի իրավիճակը:**

Տարածաշրջանին բնորոշ են ձմեռը՝ չափավոր ցուրտ, թույլ քամիներով և օպտիմալ խոնավությամբ: Դիլիջան քաղաքի կլիման բարեխառն լեռնային է՝ ցուրտ ձյունառատ ձմեռներով և տաք, համեմատաբար խոնավ ամառներով: Հաճախակի են լինում մառախուղները: Օդի առավելագույն ջերմաստիճանը 31.9°C է, նվազագույնը՝ -16.3°C: Տարեկան թափվում են 656մմ մթնոլորտային տեղումներ: Օդի հարաբերական խոնավությունը տարեկան կազմում է 73%: Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 47սմ: Քամու միջին տարեկան արագությամբ 1,5 մ/վրկ, քամու հաշվարկային արագությունը կրկնելիությունը 25 տարի 1 անգամ՝ 21մ/վրկ :

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Դիլիջանի օդերևութաբանական կայանի դիտարկումները և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 1

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,  
ՁՄՈՒԱՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
11. Դիլիջան	-1.4	-0.7	2.5	7.8	12.1	15.5	18.5	18.3	14.4	9.4	4.4	0.4	8.4	-22.8	38.1

**Օդի հարաբերական խոնավությունը (%)**

Աղյուսակ 2

**ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
11. Դիլիջան		65	65	69	72	78	78	76	76	79	78	73	67	73	65	51	76	61

**Մթնոլորտային տեղումները**



ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
11. Դիլիջան	23	30	48	68	107	104	70	52	46	51	36	21	656	158	498
	35	33	42	42	58	74	45	47	40	45	44	33	74		

Քամի

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								ըստ ուղղությունների	Միջին ամսական արագությունը, մ/վ	Ֆերակշտող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Ֆերակշտող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
13. Դիլիջան	հունվար	3	19	2	3	22	32	15	4	28	2.1	ՀսԱրլ	2.5	Հվ	2.8
		1.6	1.7	1.8	2.4	2.8	2.5	2.0	1.5						
	ապրիլ	4	41	6	4	13	20	9	3	31	2.0				
		1.6	2.2	2.0	2.4	2.5	2.3	1.6	1.5						
	հուլիս	5	63	10	2	2	7	8	3	42	1.7				
		1.9	2.5	2.4	1.4	1.4	1.3	1.1	1.4						
հոկտեմբեր	5	46	6	3	10	17	10	3	43	1.5					
	1.7	2.2	1.9	1.7	1.9	1.7	1.4	1.4							


ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
17. Դիլիջան	ժ	118	129	145	136	164	206	199	194	185	143	126	115	1860
	օր	7	5	6	6	4	2	3	4	3	6	6	6	58

Նկար 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԵՐՋԱՆԱՅՈՒՄԸ ԵՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Օդային ավազան. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) հետ համեմատությամբ: Բնակլիմայական պայմաններով Դիլիջանը եզակի բնակավայրերից է, որտեղ բնությունն ու բնապատկերը լրացուցիչ դրական ներգործություն են ունենում հիվանդների և հանգստացողների և տուրիստների վրա:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում կոմունալ-կենցաղային օբյեկտների, ջեռուցման գազային անհատական սարքերը և ավտոտրանսպորտը: Դիլիջանի օդի աղտոտվածությունը չի գերազանցում նորմատիվային մակարդակը:

Համաձայն Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024 թ. մինչև 10.0հազար բնակչի համար, որի մեջ մտնում է Թեղուտ բնակավայրը, օդային ավազան աղտոտող նյութերի միջին հնգամյա ֆոնային կոնցենտրացիաները սահմանվել են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ<sup>3</sup>
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ<sup>3</sup>
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ<sup>3</sup>
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ<sup>3</sup>

#### 8.2.4. Հողային ռեսուրսներ.

Տարածշրջանում գերակշռում են անտառային հողերը: Անտառային գոտում գերակշռում են անտառային շականագույն հողերը, որոնք աչքի են ընկնում բարձր հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Ողջ անտառային գոտում հանդիպում են կարբոնատներով հարուստ, ապարների վրա զարգացած՝ տափաստանացված շականակագույն հողերը, մոզայիկ կառուցվածքով: Մարգագետնատափաստանային հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզորության: Ենթալլայան գոտում զարգացած են լեռնամարգագետնային սևահողերը: Լեռնամարգագետնային հողերն ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Այնտեղ որտեղ տարածքը երոզացված չէ, հողերն աչքի են ընկնում հզոր

հումուսային շերտով՝ մինչև 40 սմ: Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է, pH 25 տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում: Լեռնամարգագետնային հողերը բնորոշվում են մակերեսային և խորքային ուժեղ քարքարոտությամբ: Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոտրակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Այս հողերը նկարագրվող շրջանում հանդես են գալիս լվացված, տիպիկ և կարբոնատային ենթատիպերով: Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են սովերահայց լանջերը և ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը:

Նկար 4



Համաձայն «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի՝ «Դիլիջան» ազգային պարկը ներառում է լանդշաֆտային յոթ հիմնական գոտիներ՝ անապատային, կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, անտառային, ենթաալպյան և ալպյան, որոնք ներառում են բարձր լեռնային գագաթներ, բերրի հովիտներ, անտառներ և գեղատեսիլ գոյացություններ:

Հողային ծածկույթի համար վտանգավոր աղտոտիչներ են համարվում ծանր մետաղները, որոնք առաջանում են գործարանների, գյուղատնտեսության, տրանսպորտի գործունեությունից, դրանց գործունեության հետևանքով առաջացող արդյունաբերական և կենդանային թափոններից: Հողերի որակի գնահատումներն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «ՀՀ հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա» N01-Ն հրամանի Հավելված 3-ին համապատասխան:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2023թ. և 2024թ. եռամսյակային տեղեկագրերում տարածաշրջանի և Դիլիջան համայնքի հողերի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:


#### **8.2.5. Ջրային ռեսուրսներ.**

Տարածաշրջանը հարուստ է մակերևութային, ստորերկրյա, արտեզյան ջրերով: Գետերը քաղցրահամ՝ տիպիկ լեռնային են, հոսում են ձորակներով: Դիլիջանի միջով հոսում է 133 կմ երկարության Աղստև գետը՝ Դիլիջան և Բլղան վտակներով: Աղստև գետը հոսում է հյուսիսարևելյան ուղղությամբ և թափվում է Քուռը: Համայնքի սահմաններում Աղստև գետն ունի համեմատաբար լայն ողողահուն՝ 50-60 մ: Գետի ջրահավաք ավազանը Հայաստանի սահմաններում կազմում է շուրջ 1610 կմ<sup>2</sup>: Քաղաքում՝ Բլղան գետի ձորում առկա են հանքային բուժիչ ջրի աղբյուրներ, որոնք իրենց քիմիական բաղադրությամբ նման են «Բորժոմի» և ֆրանսիական «Վիշիի» հանքային աղբյուրներին: Քաղաքի հյուսիսային մասում է գտնվում շուրջ 8մ խորություն ունեցող Պարզ լիճը: Պարզ լճից դեպի արևելք, Գոշ գյուղից 3 կմ հեռավորության, 1500 մ բարձրության վրա է գտնվում Գոշի (Տզլկա) լիճը:

**Հիդրոերկրաբանական տեսակետից** ստորերկրյա ջրերի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի ինչպես կլիման, այնպես էլ շրջանի երկրաբանական կառուցվածքը, ֆիզիկաաշխարհագրական պայմանները, ապարների լիթոլոգիական կազմը, տեղանքի մորֆոլոգիան: Ստորերկրյա ջրերի ձևավորման և սնուցման համար կարևոր նշանակություն ունեն մթնոլորտային տեղումները: Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Մակերևութային ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն: ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում: Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի տեղեկագրի՝ 2024թ. 1-ին եռամսյակում գետերում կատարված դիտարկումների արդյունքների՝ Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև, Դիլիջան քաղաքից ներքև, Իջևան քաղաքից վերև հատվածներում փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Իջևան քաղաքից ներքև փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Նկար 5






Նախատեսվող գործունեության տարածքում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան:

### 8.2.6. Կենսաբազմազանություն.

Նախատեսվող գործունեության տարածաշրջանն աչքի է ընկնում բարենպաստ կլիմայական պայմաններով և ռեկրեացիոն ռեսուրսներով: Անտառները հիմնականում ունեն բնական ծագում: Ըստ Հայաստանի ֆլորիստական շրջանների բաժանման (Թախտաջյան, 1954), այն ընդգրկված է Իջևանի ֆլորիստական շրջանում՝ ծովի մակերևույթից 1400-1460 մ ծ.մ.բարձրության.:



Տարածաշրջանի անտառային բուսականությունը հիմնականում կազմված է կովկասյան և հյուսիսային ֆլորիստիկ տարրերից: Ավելի ցածր լեռնային գոտում (մինչև 1000մ) գերակշռում են արևելյան բոխու անտառները (*Carpinus orientalis*), առկա են նաև Վրացական կաղնին (*Quercus iberica*), սովորական և հացենի սրապտուղը (*Fraxinus excelsior*, *F. oxycarpa*), ավելի հազվադեպ՝ Սովորական բոխին (*Carpinus betulus*), Վրացական և Դաշտային թխկին (*Acer ibericum*, *Acer campestre*), Թեղի տերևաշատը (*Ulmus foliacea*), Գիհին (*Juniperetum*), Կովկասյան փռշին (*Celtis caucasica*), նշենին (*Amigdalus fenzliana*), կովկասյան տանձենին (*Pirus caucasica*) և այլն: 700-1400մ բարձրության վրա աճում է՝ Ընկուզենի սովորականը (*Juglans regia*), իսկ ավելի բարձր հատվածներում 900-2000մ բարձրության վրա տարածվում են հիմնականում Կաղնի խոշորառեչ (*Quercus mactanthera*), Հացենի սովորական (*Fraxinus excelsior*), Հաճարենի արևելյան (*Fagus orientalis*), Բոխի սովորական (*Carpinus betulus*), Բոխի արևելյան (*Carpinus orientalis*), Թխկի դաշտային (*Acer campestre*), Լորենի սրտաձևի (*Tilia cordata*), Խնձորենի արևելյան (*Malus orientalis*), Թեղի մանրատերև (*Ulmus minor*), Կեռասենի անտառային (*Cerasus avium*) և այլն: Ենթանտառում հանդիպում է Դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*), Իլենի եվրոպական (*Euonymus europaea*), Գերիմաստի սովորական (*Viburnum lantana*) և այլն:

Բավական տարածված են վայրի մրգերի ծառատեսակները՝ խնձորենին (*Malus*), տանձենին (*Pyrus*), սզնին (*Crataegus*), ընկուզենի հունականը (*Juglans regia*), սալորենի չովածը (*Prunus divaricata*) և այլն:

Ջոնալ բուսականության տիպերից հայցվող տարածքում և անմիջական հարևանությամբ հանդիպում են անտառներ, տերևավոր նոսրանտառներ, իսկ ինտրոզոնալ բուսականությունից՝ պետրոֆիլ բուսականություն:

Խոտածածկում Հացազգիներից (*Poaceae*) հանդիպում են Ոզնախոտ հավաքված (*Dactylis glomerata*), Խմրախոտ բուրավետ (*Anthoxanthum odoratum*), Բարակոտնուկ սանրանման (*Koeleria cristata*), Դաշտավլուկ մարգագետային (*Poa pratensis*), Դաշտավլուկ անտառային (*Poa nemoralis*) և այլն: Բարդածաղկավորներից (*Asteraceae*) հանդիպում են Տերեփուկ ուռատերև (*Centaurea salicifolia*), Հալնորուկ ամբողջատերև, (*Senecio integrifolius*), Անթեմ տրիումֆետի (*Anthemis triumfetii*), Հազարատերևուկ Բիբերշտեյնի (*Achillea biebersteinii*), Գողտրիկազգիներից (*Boraginaceae*)՝ Մոմախոտ փոքր (*Cerithe minor*), Կակաչազգիներից (*Papaveraceae*)՝ Կակաչ թռչող (*Papaver fugax*), Գնարբուկազգիներից (*Primulaceae*)՝ Գնարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx*), Ակքանազգիներից (*Dipsacaceae*)՝ Ջիվան հսկայական (*Cephalaria gigantea*), Գորտնուկազգիներից (*Ranunculaceae*)՝ գորտնուկ լեռնային (*Ranunculus oreophilus*), Բակլազգիներից (*Fabaceae*)՝ Կորնգան սրանավակ (*Onobrychis oxitropoides*), Տափուրո մարգագետնային (*Lathyrus pratensis*), Երեքնուկ մարգագետնային (*Trifolium pretense*), Երեքնուկ նման (*Trifolium ambiguum*), Երեքնուկ դաշտային (*Trifolium campestre*), Ջանգակազգիներից (*Campanulaceae*)՝ Ջանգակ խմբված (*Campanula glomerata*), Շրթնածաղկազգիներից (*Lamiaceae*)՝ Խուլ եղինջ ցողունազիրկ (*Lamium amplexicaule*), Խուլեղինջ սպիտակ (*Lamium album*), Արեղախոտ բալանգայի (*Stachys balansea*), Խնկածաղիկ սովորական (*Origanum vulgare*), Կաղամբազգիներից (*Brassicaceae*)՝ Չազախոտ գեղեցիկ (*Erysimum pulchellum*), Վառվուրկ բաժակային (*Alyssum alyssoides*) և այլն:

Նկար 7





Պետրոֆիլ բուսականության կազմում հանդիպում են Թանձրատերևազգիներից (Crassulaceae) Թանթոնիկ կովկասյան (*Sedum caucasicum*), Թանթոնիկ հակադրատերև (*Sedum oppositifolium*), Թանթոնիկ իսպանական (*Sedum hispanicum*), Բարդածաղկավորներից (Asteraceae)՝ Խինձ կոշտ (*Scorzonera rigida*), Հալնորուկ ճարձրուկատերև (*Senecio erucifolius*), Մեխակազգիներից (Caryophyllaceae)՝ Մեխակ արևելյան (*Dianthus orientalis*), Շրթնածաղկազգիներից (Lamiaceae)՝ Կատվախոտ Մուսինի (*Nepeta mussinii*), Սաղավարտուկ արևելյան (*Scutellaria orientalis*), Ասպլենազգիներից (Aspleniaceae)՝ Ասպլեն հյուսիսային (*Asplenium septentrionale*) և այլն:

Նկար 8




Լեռնամարգագետնային բուսականությունը տարածված է 1700-2550մ բարձրության վրա: Մարգագետինների մեծ մասն օգտագործվում են որպես արոտավայրեր, որոնցում հանդիպում են սիզախոտ մարգագետնայինը (*Phleum pratense*), ոգնախոտ կծկավորը (*Dactylis glotemera*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), երեքնուկ մարգագետնայինը (*Trifolium pratense*), ագրիստուկ սպիտակը (*Agrostis alba*) և այլն: Ենթալպյան մարգագետնում գերակշռում են հացազգի, ընդավոր բույսերի և խոտաբույսերի ներկայացուցիչները՝ ցորնուկը (*Bromus variegatus*), արևելյան կակաչը (*Papaver orientalis*), խարբուկ խոշորածաղիկը (*Lapsana grandiflora*), տերեփուկը (*Centaurea fischeri*) և այլ տեսակներ: Բնական ալպիական բուսականությունը բացակայում է, մասնակիորեն հանդիպում են՝ կազմորի (*Nardus stricta*), ոչխարի շյուղախոտ (*Festuca ovina*), գնարբուկ (*Primula algida*), կովկասյան քիմիոն (*Carum caucasicum*), դաշտավլուկ ալպիական (*Poa alpine*):

**«Դիլիջան» ազգային պարկ.** Դիլիջան» ազգային պարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հյուսիս-արևելքում, զբաղեցնում է ՀՀ Տավուշի մարզի փոքր հատվածները, նաև՝ Լոռու և Գեղարքունիքի մարզերը: Այն տարածվում է մի քանի լեռնաշղթաների լանջերին՝ 1070մ - 2900մ բարձրությունների վրա: Զբաղեցնում է 1786.4հա մակերես: Դիլիջան ԱՊ-ի տարածքը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է, որն առանձնանում է հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանությամբ, անտառային լանդշաֆտով, գիտական, ճանաչողական, տնտեսական առանձին էկոհամակարգերով ու բնության հուշարձանների բնապահպանական, գիտաճանաչողական, առողջապահական և ռեկրացիոն բարձր արժեքներով: ԱՊ-ի նպատակն է ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության,

պատմամշակութային ժառանգության պահպանումը, ինչպես նաև համահունչ տնտեսական զարգացումը: Ազգային պարկը տարածված է Դիլիջան քաղաքի և 9 գյուղական համայնքների վարչական սահմաններում: Դիլիջան քաղաքը և հինգ գյուղական բնակավայրեր (Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Խաչարձան և Աղավնավանք) գործնականում գտնվում են ԴԱՊ-ի սահմաններում: «

Նկար 9.



Համաձայն «Դիլիջան» Ազգային պարկի կանոնադրության՝ ԴԱՊ-ը բաժանվում է տարբեր տարածագործառնական նշանակության գոտիների.

- ա) արգելոցային- զբաղեցնում է 8,164.2 հա տարածք կամ ԴԱՊ 24.2%,
- բ) հանգստի (ռեկրեացիոն)-զբաղեցնում է 2,817.7 հա տարածք կամ ԴԱՊ 8.3% ,
- գ) տնտեսական - զբաղեցնում է 22,783.1 հա տարածք կամ ԴԱՊ 67.5%:

Այն ունի նաև 8167 հա բուֆերային գոտի: Սահմանվում է պահպանության ռեժիմը, տարբեր տարածքների թույլատրելի օգտագործումը, ռեսուրսների օգտագործման և պահպանության մակարդակները:

Անտառը կազմում է ազգային պարկի տարածքի 94%-ը: ԱՊ-ի անտառում աճում են շուրջ 40 տեսակի արժեքավոր ծառատեսակներ և 18 տեսակի թփեր: Հիմնական անտառ կազմող ծառատեսակներն են կաղնին, հաճարենին, բոխին: Սաղարթավոր տերևաթափ ծառատեսակներից տարածված են նաև թխկու, կեչու, հացենու, ուռենու, լորենու, թեղու և այլ տեսակներ:

**Երկրաբանություն և ռելիեֆ.** Ազգային պարկի տարածքի 43%-ից ավելին գտնվում է 1600-2000մ, 33,9%-ը՝ 1200-1600մ, իսկ 16%-ը՝ 2000-2400մ բարձրությունների վրա: Վերջիններս հիմնականում ներառում են բարձրադիր անտառները և ենթալպյան մարգագետինները: Այս տարածքը կարևոր ապրելավայր է էնդեմիկ տեսակների՝ Կովկասյան ազնվացեղ եղջերուի և Կովկասյան մարեհավի համար:

**Կլիման.** ԴԱՊ-ի տարածքի կլիմայական պայմանները պայմանավորված են ուղղահայաց գոտիավորմամբ և հիմնականում բնութագրվում են չափավոր տաք և խոնավ կլիմայով՝ երկար ամառ, իսկ բարձր լեռնային գոտում՝ երկար ձմեռ:

**Հիդրոլոգիան.** ԴԱՊ-ի գետերը պատկանում են Քուր գետի ավազանին՝ տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղները հիմնականում տեղի են ունենում գարնանը՝ առաջացնելով սելավներ, սահանքներ: Աղստևը պարկի տարածքով անցնող հիմնական գետն է, որը սկիզբ է առնում Փամբակի հյուսիսային լանջերից (Թեժ լեռ, 3101մ): Այն սնվում է ձնհալներից ու անձրևներից, առավելագույն հոսքը նկատվում է մայիսից մինչև հունիս: Աղստևի հիմնական վտակը Գետիկն է, իսկ Հովվաջուր, Շտոդանաջուր, Հաղարծին և Բլղան գետակները փոքր վտակներ են: ԴԱՊ-ը հայտնի է իր հանքային աղբյուրներով: Հատկանշական են Թթու ջուրը (Գետիկ գետի հովտում), Մարգահովիտը (հարուստ է երկաթով), Ֆիոլետովոն (հարուստ է ածխածնով և կալցիումով) և Բլղանի աղբյուրները («Դիլիջան» հանքային ջուր): Հիդրոկարբոնատներով հարուստ այս ջրերը օգտագործվում են աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար:

Պարկի ամենամեծ ու ամենահայտնի լիճը Պարզ լիճն է, որը գտնվում է Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 1400մ բարձրության, Դիլիջան քաղաքից 8 կմ (հյուսիս-արևելք) հեռավորության վրա: Զբաղեցնում է 2հա մակերես, ջրհավաք ավազանը՝ 1,52 կմ<sup>2</sup>:

**Նկար 10.**





Գոշալիճն է (Տգրկա) գտնվում է Պարզ լճից արևելք՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա, զբաղեցնում է 1,53հա է մակերես:

**Հողեր.** ԴԱՊ-ի հողային ծածկույթն ունի հիմնականում երկու հողատիպեր՝ անտառային և լեռնամարգագետնային: Անտառային գոտում գերակշռում են շագանակագույն և դարչնագույն անտառային հողերը, որոնք ունեն բարձր խոնավություն: Դարչնագույն անտառային հողերը գտնվում են մինչև 1500մ բարձրության վրա՝ կաղնու և բոխու անտառածածկի գերակշռությամբ:

Շագանակագույն անտառահողերը հանդիպում են հյուսիսային լանջերին՝ մինչև 1800մ բարձրության վրա՝ հիմնականում բոխու և հաճարենու անտառածածկույթներով: Հողային կառուցվածքին բնորոշ է շագանակագույն գունավորումը և թույլ գոտիավորումը: Սկսած 1700-1800մ բարձրություններից, շագանակագույն հողերը փոխարինվում են սև հողերի, իսկ ավելի 2400մ բարձր տեղանքներում՝ լեռնամարգագետնային սևահողերի: Լեռնամարգագետնային հողատեսքերը հանդիպում են հարուստ խոտածածկով նոսր անտառներում: Այս հողերը, ընդհանուր առմամբ, հարուստ են ազոտով, ֆոսֆորով և ազատ երկաթով: ԴԱՊ-ի տարածքի լայնարձակ հովիտներում տարածված են բերրիության բարձր մակարդակ ունեցող ալլուվիալ հողերը:

ԴԱՊ-ի տարածքին բնորոշ են թույլ հողմահարումները, երոզիոն գործընթացները և փարթամ վեգետատիվ ծածկը:

**Կենսաբազմազանություն.** Համաձայն «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի՝ ազգային պարկը Գլոբալ համատեքստում գտնվում է «Կովկասյան կիզակետում», որը ԲՀՀ-ի ու Կենսաբազմազանության միջազգային պահպանության (Conservation International) կազմակերպության կողմից կենսաբազմազանության առումով ճանաչվել է աշխարհի կարևորագույն վայրերից մեկը: Պարկը հանդիսանում է 1150 տեսակի անոթավոր բույսերի (այդ թվում՝ նաև յոթ էնդեմիկ տեսակների), ինչպես նաև 286 տեսակի ողնաշարավոր կենդանիների կենսամիջավայր:

**Բույսեր.** «Դիլիջան» ազգային պարկի բուսականության հիմնական տիպը անտառն է: Այստեղ հիմնականում գերակշռում են լայնատերև տերևաթափ ծառատեսակները՝ հաճարենի արևելյան (*Fagus orientalis*), կաղնի վրացական (*Quercus iberica*), կաղնի արևելյան (*Q. macranthera*), բոխի սովորական (*Carpinus betulus*), բոխի արևելյան կամ դաժի (*C. orientalis*): Հաճարենու, կաղնու և կաղնու-բոխու անտառները զբաղեցնում են ծովի մակարդակից 1000-2000մ բարձրության լեռնալանջերը: Գիհու անտառները հանդիպում են 1800-2000մ բարձրությունների վրա: Ենթալայան մարգագետինները տարածված են 1800-1900 մ-ից բարձր:

Պարկի ենթալայան գոտում հաճախ հանդիպում են կեչու անտառներ, որոնցում գերակշռում են կեչի ելունդավոր (*Betula pendula*), կեչի Լիտվինովի (*B. litvinovii*), բարդի դողդոջուն (*Populus tremula*), այծուռենի (*Salix caprea*), ինչպես նաև շուշան հայկական (*Lilium armenum*), ընձախոտ արևելյան (*Aconitum orientale*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), քոսքոսկ կովկասյան (*Scabiosa caucasica*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), զանգակ խմբված (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկ (*Betonica macrantha*), դորոնիկում երկարատերև (*Doronicum oblongifolium*) տեսակները: Ասեղնատերև ծառատեսակներից կազմված անտառները պարկում սամանափակ են: Պարկի տարածքում աճում են նաև երկարակյաց կենու՝ 300-400 տարեկան, մինչև 25 մետր բարձրություն և բնի՝ 80-100 սմ տրամագիծ ունեցող ծառեր: Երրորդական ժամանակշրջանից պահպանված այս ծառատեսակների պուրակներից մեկը գտնվում է Գետիկի ավազանում և ամենախոշորն է Անդրկովկասում:

Պարկի անտառները շատ հարուստ են նաև վայրի պտղատու-հատապտղատուների՝ տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*), խնձորենի արևելյան (*Malus orientalis*), սալորենի չոլած (*Prunus divaricata*), սալորենի փշոտ կամ մամխենի (*P. spinosa*), հոնի սովորական (*Cornus mas*), զկեռ սովորական (*Mespilus germanica*), կոկոռչենի թեքված (*Grossularia reclinata*), ինչպես նաև սզնի (*Crataegus*), հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus*), ընկուզենի սովորական (*Juglans regia*) և տիլենի սովորական (*Corylus avellana*) տեսակներով:

Անտառագուրկ փոքր հատվածներում ներկայացված են տափաստանային համակեցությունները՝ շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*) և փետրախոտ գեղեցիկ (*Stipa pulcherrima*) տեսակների առկայությամբ, որոնք բնորոշ չեն տարածքին:

Տարախոտահացազգիներից հանդիպում են՝ բարակոտնուկ սանրանման (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետային (*Poa pratensis*), դաշտավլուկ անտառային (*P. nemoralis*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմբախոտ բուրավետ (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ

սիբիրյան (*Trisetum sibiricum*), գնարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx*), տերեփուկ դեղնամանուշակագույն (*Centaurea cheiranthifolia*) և այլ տեսակները: Աբեղասարի ժայռոտ և քարքարոտ արևմտյան լանջերն ապրելավայր են բազմաթիվ քարասեր տեսակների համար, որոնցից Հայաստանի կարմիր գրքում ընդգրկված սրոհունդ հայկական (*Hypericum armenum*) և քարբեկ եռմատնանի (*Saxifraga tridactylites*), ինչպես նաև քարբեկ գիհատերև (*Saxifraga juniperifolia*), խինձ կոշտ (*Scorzonera rigida*), զիվան միջին (*Cephalaria media*), քոսքունկ աղավնու (*Scabiosa columbaria*) տեսակների համար:

Քարափներին և լեռնային ձորակների քարքարոտ լանջերին հանդիպում է ինտրագոնալ քարասեր բուսականությունը: Գետերի և լճերի ափերին գերակշռում է ջրաճահճային բուսականությունը, որոնցում հանդիպում են ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշխ (*Carex*), գորսնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) և այլ ցեղերի տարբեր տեսակներ: Գոշի լճի ափային տարածքում գրանցվել է այս տարածքի համար ոչ բնորոշ ձիաձետի (*Equisetum telmateia*) միատարր համակեցությունը: Պարկը բավական հարուստ է գեղազարդային՝ սոխի հաղթության, կուսածաղիկ խոտային, նվիկ արևելյան, բաղեղ կովկասյան, ոզնագլխիկ, գրոսհեյմիա խոշորածաղիկ, զանգակ, հիրիկ եղանի, շուշան հայկական և այլ տեսակներով:

Պարկում հանդիպում են սննդում օգտագործվող 123 բուսատեսակներ: Աճում են շուրջ 180 դեղաբույսեր (անթառամը, դաղձը, ուրցը, մեղրածուծը, լոշտակը, մալտակը և այլն): Ազգային պարկի տարածքում և շրջակայքում հայտնաբերվել են 480 մակրոսկոպիկ սնկերի տեսակներ և ենթատեսակներ, որոնց մեծ մասը օգտագործվում են մարդու սննդում: Ամենատարածվածներն են դառնամատիտեղը (*Russula*), կաթնասունկը (*Lactarius*), սարդոստայնասունկը (*Cortinarius*), թելիկասունկը (*Inocybe*), ճանճասպանը (*Amanita*), կոճղասունկ իսկականը (*Armillaria mellea*), ականջասունկը (*Pleurotus*), գլխասունկ պարկանման (*Calvatia utriformis*), շամպինիոն սովորական (*Agaricus campestris*), մարգագետնային կոճղասունկ (*Marasmius oreades*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկլիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*) և այլ տեսակներ: Պարկի տարածքում հայտնաբերվել են նաև 38 տեսակի թունավոր սնկեր՝ խոզուկասունկը (*Paxillus involutus*), կեղծ կոճղասունկը (*Hypholoma fasciculare*), ճանճասպան կարմիրը (*Amanita muscaria*), ճանճասպան հովազայինը (*Amanita pantherina*), ճանճասպան կանաչը (*Amanita phalloides*), սատանայի սունկը (*Boletus satanas*) և այլն: Ազգային պարկի տարածքում հաշվառված որոշ սնկատեսակներ /15/ վտանգված են և ներառված են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում- ճանճասպան կարմիրը (*Amanita muscaria*), ճանճասպան կանաչը (*Amanita phalloides*), աստերոֆորա անձրևայինը (*Asterophora lycoperdoides*), բոլետոպսիս սևասպիտակը (*Boletopsis leucomelas*), սպիտակ սունկը (*Boletus edulis*), սատանայի սունկը (*Boletus satanas*), կլավարիադելֆուս վարսանդանմանը (*Clavariadelphus pistillaris*), ցիստոդերմա ամիանտայինը (*Cystoderma amianthina*), հապլոպորուս հոտավետը (*Haploporus odorus*), ոզնասունկ մարջանաձևը (*Hericium coralloides*), ոզնասունկ կաղնու (*Hericium erinaceum*), հովանոցասունկ աղջկականը (*Macrolepiota puellaris*), մուտինուս շնայինը (*Mutinus caninus*), կոնասունկ փաթիլատիկը (*Strobilomyces strobilaceus*), գետնասունկ ամառայինը (*Tuber aestivum*): «Դիլիջան» ազգային պարկի տարածքում աճում են 97 ընտանիքի 441 ցեղի շուրջ 1150



տեսակի անոթավոր բույսեր(այդ թվում նաև յոթ էնդեմիկ տեսակներ): Բույսերից 17-ն ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (9-ը՝ վտանգված(EN), 5-ը՝ խոցելի(VU), իսկ 3-ը՝ անհետացման եզրին գտնվող (NT) կարգավիճակով), մասնավորապես. Պսեֆելուս դեբեդի (Psephellus debeidicus) (EN), Հողմածաղիկ գորտնուկային (Anemone ranunculoides) (EN), Գնարբուկ սքանչելի (Primula amoena) (VU), Շուշան հայկական (Lilium armenum) (NT) և այլն: Բույսերի 14 տեսակը էնդեմներ են, որոնցից 7-ը՝ Հայաստանի, 3-ը՝ Կովկասի, 4-ը՝ Անդրկովկասի, մասնավորապես. Եզնակոխ Կոզո-Պոլյանսկու (Bupleurum koso-poljanskyi), Պսեֆելուս փամբակի (Psephellus pambakensis), Խլածաղիկ Օլգայի (Scrophularia olgae), Ճոճուկ կովկասյան (Cerastium holosteum), Կտավախոտ Շելկովնիկովի (Linaria schelkownikowii), Արնունի հայաստանյան (Sorbus hajastana) և այլն:

Նկար 11



Եզնակոխ Կոզո-Պոլյանսկու



Արքայածաղիկ բլրակային



Բանպոտ Բրաունի



Կենի հատապտղային



Էպիպոգիում անտերև



Թեզիում փոված

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում աճում են նաև Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ. Պոպուլիկ Մարշալի (Corydalis marschalliana), Արքայածաղիկ բլրակային (Fritillaria collina), Էպիպոգիում անտերև (Epipogium aphyllum), Բանպոտ Բրաունի (Polystichum braunii), Օրտիլիա

փոքր (*Orthilia secunda*), Գնարբուկ սքանչելի (*Primula amoena*), Կլվածադիկ (*Coccyganthe flox-cuculi*), Մրտավարդ կովկասյան (*Rhododendron caucasicum*), Շուշան հայկական (*Lilium armenum*) և այլն, ինչպես նաև սնկեր Աստերոֆորա անձրևային (*Asterophora lycoperdoides* (Bull.) Ditma, Սպիտակ սունկ, թնջուկ (*Boletus edulis* Bull.:Fr.), Բոլետոպսիս սև-սպիտակ (*Boletopsis leucomelaena* (Pers.) Fayod և այլն:

**Կենդանական աշխարհ.** ազգային պարկի կենդանական աշխարհը հարուստ է, որը պայմանավորված է բազմազան էկոհամակարգերի առկայությամբ: Հանդիպում են հիմնականում լեռնանտառային, տափաստանային, մարգագետնային լանդշաֆտներին, ինչպես նաև ժայռերին և խոնավ տարածքներին բնորոշ կենդանատեսակներ:

Ազգային պարկի տարածքում հանդիպում են բզեզների (*Coleoptera*) 512 տեսակ, որոնք պատկանում են 44 ընտանիքների 296 ցեղերին: Այստեղ հայտնաբերվել է Հայաստանի բզեզների ողջ ֆաունայի 12%-ը, թիթեռների՝ շուրջ 50%-ը և մրջյունների՝ 25%-ը: Տարածքում հանդիպում են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված 15 տեսակ, որոնցից 6-ը գրանցված են նաև Բեռնի կոնվենցիայում և 5-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Նման միջատներից պարկի տարածքում հանդիպում են Հայաստանի՝ 7, Անդրկովկասի՝ 18 և Կովկասի էկոտարածաշրջանի՝ 30 էնդեմիկներ: Բզեզների ընտանիքների տեսակներից են՝ Գնայուկներ(*Carabidae*), Լեշակերներ(*Silphidae*), Մրամարմիններ(*Staphylinidae*), Թերթիկաբեղավորներ(*Scarabaeidae*), Սևամարմիններ(*Tenebrionidae*), Զատիկներ(*Coccinellidae*), Տերևակերներ(*Chrysomelidae*), Երկարաբեղիկներ(*Cerambycidae*), Երկարակնձիթներ կամ փղիկներ(*Curculionidae*) և այլն:

Տերեկային թիթեռները ներկայացված են 7 ընտանիքների 68 ցեղերին պատկանող 122 տեսակներով՝ Ապոլոն (*Parnassius apollo kashtshenkoi* Sheljuzko), Հաստազուլի թիթեռներ(*Hesperidae*), Կապտաթիթեռներ(*Lycaenidae*), Նիմֆալիդներ(*Nymphalidae*), Ճերմակաթիթեռներ(*Pieridae*) և այլն:

Մրջյուններից (*Formicidae*) հայտնաբերվել է 10 ցեղերին պատկանող 29 տեսակ: Ազգային պարկի տարածքում հանդիպում են նաև 286 տեսակի ողնաշարավոր կենդանատեսակներ, որոնցից 53-ը ընդգրկված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և 17-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

«Դիլիջան» ազգային պարկի գետերում և լճերում բնակվում է 15 ձկնատեսակ, որնցից է էնդեմիկ և Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում գրանցված Սևանի կողակը (*Capoeta sevangi*) (VU): Հանդիպում են նաև կարմրախայտը (*Salmo trutta fario*), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*), Քուռի բեղլուն (*Barbus lacerta cyri*): Աղստևում տարածված են կովկասյան թեփուղը (*Squalius cephalus orientalis*), հազվադեպ հանդիպում են մուրծին (*Luciobarbus* (*Barbus*) *mursa*), Քուռի լերկաձուկը (*Oxynemacheilus* (*Barbatulla*) *brandti*) և այլն: Ազգային պարկի տարածքում հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ՝ լճագորտը (*Pelophilax ridibundus*),



փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կանաչ դոդոշը (*Bufo viridis*), Շելկովնիկովի սովորական ծառագորտը (*Hyla arborea schelkownikowi*):

Մողուններից հանդիպում են 1 տեսակի կրիա, 12 տեսակի մողեսներ և 9 տեսակի օձեր: 7 տեսակներ ընդգրկված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, 6-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում, 3 տեսակը՝ Անդրկովկասի, իսկ 2-ը՝ Կովկասի էնդեմիկ են: Ճանապարհամերձ ժայռերի վրա հանդիպում են *Darevskia* ցեղի ժայռային մողեսներից հայկական մողեսը (*Darevskia armeniaca*, *D. dahl*(EN), Դալի մողեսը և Ռոստոմբեկովի մողեսը (*Darevskia Rostombekovi*), մարգագետնային մողեսը (*Darevskia praticola*), որոնք Անդրկովկասի էնդեմիկ տեսակներ են և գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում:

Նկար 12



(*Sympecma paedisca*)



Կապույտ ճպուռ (*Aeshna cyanea*)



Սանրաբեղ չրիկան (*Ctenicera pectinicornis*)



Սպիղոն (*Parnassius mnemosyne rjabovi* Sheljuzhko)



Գառնանգղ (Մորուքավոր անգղ) (*Gypaetus barbatus* Linnaeus)



Քարաքծիկ (*Aquila chrysaetos*)

Հանդիպում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված Ռադդեի (*D. raddei*) և քուռի (*D. portschinskii*) մարգագետնային (*D. praticola*) (VU) մողեսներն, ինչպես նաև ճարպիկ մողեսը (*Lacerta agilis*), շերտավոր մողեսը (*L. strigata*), ջարդվող իլիկամողեսը (*Anguis fragilis*), ձիթապտղագույն սահնօձը (*Platyceps najadum*), ջրային լորտուն (*Natrix tessellata*), ճահճային կրիա – *Emys orbicularis*, դեղնափորիկ-*Pseudopus apodus*, որդանման կույրօձ- *Typhlops vermicularis* և այլն:

«Դիլիջան» ազգային պարկում հանդիպում են թռչունների շուրջ 190 տեսակ, որոնցից 130-ը բնադրում են պարկում: Թռչունների 36 տեսակը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, 11-ն ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում: Գրանցված է Կովկասյան մեկ էնդեմիկ տեսակ՝ կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczii*) և Հայկական բարձրավանդակի էնդեմիկ մեկ տեսակ՝ հայկական որորը (*Larus armenicus*):

Ազգային պարկի տարածքում հանդիպում են 55 տեսակի կաթնասուններ, որոնցից 9-ը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, 3-ը ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Առկա է նաև մեկ էնդեմիկ՝ Անդրկովկասի և 7-ը՝ Կովկասի տեսակները:

ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված են եվրոպական լայնականջ չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը և ջրասամույրը (NT): ՀՀ կենդանիների Կարմիր գրքում նշված են կովկասյան ազնվացեղ եղջերուն (*Cervus elaphus maral*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys schelkovnikovi*), ջրասամույրը (*Lutra lutra*), ծալկաշուրթ լայնականջ չղջիկը (*Tadarida teniotis*), սովորական երկարաթև չղջիկը (*Miniopterus schreibersi*, գորշ ականջեղ չղջիկը (*Plecotus auritus*), անտառակատուն (*Felis silvestris*), գորշ արջը (*Ursus arctos*): Էնդեմներն են անդրկովկասյան կուրամկնիկը (Անդրկովկասի էնդեմ), թփուտային դաշտամուկը, դեղնակուրծք մուկը, Ռադդեի, Սատունինի և Վոլնուխինի գորշատամները (Կովկասի էնդեմներ) և այլն:

Կլիմայավարժեցվում են նաև ուսսուրական բժավոր եղջերուն, ազնվացեղ եղջերուն և վայրի խոզը:

Գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չկան:

#### 8.2.7. Պատմամշակութային հուշարձաններ.

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ Դիլիջան քաղաքի և Թեղուտ բնակավայրի վարչական տարածքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը.

Թեղուտ գյուղ

Աղյուսակ 6

1	2	3	4	5	6	7	8
1			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՀՆԴՋԱՆ»	10-14 դդ.	գյուղից 3 կմ հս-աե, «Հնդզան» հանդամասում	<	1
	1.1		Գերեզմանոց	10-14 դդ.	գյուղատեղիի աե եզրին, անտառում	<	1.1
		1.1.1	Մատուռ	11-12 դդ.		<	1.1.1
	1.2		Գերեզմանոց	10-14 դդ.	գյուղատեղիի ամ կողմում, «Մորուտա ծորի» աջակողմում	<	1.2
		1.2.1	Մատուռ	11-12 դդ.		<	1.2.1
	1.3		Ձիթհան	12-14 դդ.	գյուղատեղիի հվ-ամ մասում, «Մորուտա ծորի» ձախակողմում	<	1.3
2			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 3 կմ հս-աե, Մորուտա գետի ձախ ափին, «Հնդզան» հանդամասում	<	2

Դիլիջան քաղաքի շրջակայքում են գտնվում տուրիստական նշանակություն ունեցող Ջուխտակ վանքը, Հաղարծինը, Գոշավանքը, Մաթոսավանքը և այլն:

ԴԱՊ-ի տարածքում կան ավելի քան 220 պատմական, հնագիտական և մշակութային վայրեր, որոնց մեծ մասը ներառված չեն զբոսաշրջային առաջարկներում՝ ֆիզիկական անմատչելիության պատճառով:

Ամենամոտ մշակութային հուշարձանը Հաղարծին վանական համալիրն է, գտնվում է 300մ հեռավորության վրա:

**8.2.8. Բնության հուշարձաններ.**

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման հավելվածի՝ Տավուշի մարզում գոյություն ունեցող բնության հուշարձաններն են.

Աղյուսակ 7

	Երկարաբանական հուշարձաններ	
1.	«Մոլլաքար» ժայռ	Տավուշի մարզ, Իջևան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Իջևան-Երևան խճուղու ձախ կողմում
2.	«Անանուն» պլազիոգրանիտներ	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, անտառտնտեսության մոտ
3.	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Բերդ ավանի հս-արմ եզրին
4.	«Անանուն» փոխակերպարային (մետամորֆիզացված) թերթաքարեր	Տավուշի մարզ, Վարագաձոր գետի վերին հոսանքում, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հվ-արմ
5.	«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 1.5 կմ հվ
6.	«Անանուն» սյունաձև էքստրուզիվ մարմին՝ նեկկ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 2 կմ հվ
7.	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի ձախ վտակի հովտում
8.	«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ
9.	«Անանուն» կվարցային դիորիտներ և գաբրո-դիորիտներ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի կիրճի աջ լանջին
10.	«Անանուն» շերտագրական մերկացում	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին
11.	«Անանուն» սանդղափուլ քարափներ	Տավուշի մարզ, Չինչին գյուղից 2.0 կմ հվ-արմ
12.	«Օձաքար» լեռնագագաթ	Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3 կմ հս-արմ, Վաղաշեն տանող ճանապարհի աջ կողմում

	<b>Կենսաբանական հուշարձաններ</b>	
1.	«Նոյեմբերյանի սոսի»	Տավուշի մարզ, քաղ. Նոյեմբերյան, Չինարածորում
2.	«Վարդան Մամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, գ. Ակնաղբյուր, ծ.մ-ից 900 մ բարձրության վրա
3.	«Սարի գյուղի սոսի»	Տավուշի մարզ, գ. Սարիգյուղ, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ, ծ.մ-ից 750 մ բարձրության վրա
4.	«Գետահովիտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովիտ գյուղի մոտ, Սառնաջուր գետի ձախ ափին, մոտ 700-800 մ բարձրության վրա
5.	«Տանձուտ»	Տավուշի մարզ, Աղավնավանք գյուղի մոտ

**8.2.9. Բնության ժառանգություն.** բնության ժառանգության տարածքներ են համարվում նաև Աղավնավանքի կենու պուրակը, Հաղարծնի հաճարենու և Խաչարձանի կաղնու անտառները, Պարզ և Գոշի (Տգրկա) լճերը:

Ազգային պարկի և հարակից համայնքների առանձնահատուկ արժեքները՝ հարուստ կենսաբազմազանությունը, բնական անտառները և ջրատարածքները (լճեր, լեռնային գետեր, ջրվեժներ), լանդշաֆտային բազմազանությունը, հանքային ջրի աղբյուրները, տեսարժան վայրերը (պատմամշակութային արժեքները), տաք և խոնավ կլիման՝ առանձնահատուկ միկրոկլիմայով, բերրի հողերը նպաստավոր պայմաններ են ստեղծում տարածքի զբոսաշրջության և տնտեսության զարգացման համար:

Համայնքն ունի Էկոտուրիզմի հեռանկարային զարգացման մեծ հնարավորություններ:

**8.2.10. Սոցիալ-տնտեսական.** սոցիալ-տնտեսական ցուցանիշները ներկայացված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի տեղեկատվության համապատասխան.

Տարածքը Territory	2 704 քառ.կմ/ sq. km
ՀՀ տարածքում մարզի տարածքի տնտեսական կշիռը, % Territory share of the marz in the territory of the RA, %	9.1
Համայնքներ, 2023 թ. տարեկազմի դրությամբ Communities, as of the beginning of 2023	4
Քաղաքներ Towns	5
Գյուղեր Villages	60
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկազմի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	119.8 հազ.մարդ/ ths. person
<i>այդ թվում՝</i> <i>including:</i>	
քաղաքային urban	49.9 հազ.մարդ/ ths. person
գյուղական rural	69.9 հազ.մարդ/ ths. person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տնտեսական կշիռը 2022թ., % Share of marz population in the total population of the RA 2022, %	4.0
Քաղաքային բնակչության թվաքանակի տնտեսական կշիռը 2022թ., % Share of urban population size 2022, %	41.7
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	110 665.5 հա/ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	25 485.3 հա /ha

Մարզկենտրոնը Իջևան քաղաքն է: 2022թ. Տավուշի մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 1.4 %,
- գյուղատնտեսություն 4.5 %,
- շինարարություն 3.0 %,
- մանրածախ առևտուր 2.4 %,
- ծառայություններ 0.9 %:

Մարզն ունի զարգացած գյուղատնտեսություն: Անասնաբուծության մեջ առաջատար ոլորտներ են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Վերջին տարիներին զարգացում է ապրում պտղաբուծությունը, ինչով մարզը նախկինում մեծ համբավ է վայելել: Վերջին տարիներին հիմնվել են պտղատու այգիներ, որոնց մեջ գերակշռում են թուզն ու արքայանարինջը: Տարեցտարի զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը: Մարզի տնտեսության առաջատար ոլորտը մշակող արդյունաբերությունն է: Առավել գերակշռող են սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են հանվում գինիներ, պահածոներ, հանքային ջուր, քարե և փայտե, վերջերս նաև տեքստիլ արտադրատեսակներ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ափով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը: Տավուշի մարզում են գտնվում Սյրում-Ջիլիզայի և Բագրատաշենի մաքսակետերը:

**Դիլիջան քաղաք.** Դիլիջան առողջարանային քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան, մարզի հարավ-արևմտյան մասում՝ Աղստև գետի հովտում, Հալաբի և Փանբակի լեռնաշղթաների միջլեռնային հատվածում՝ ծովի մակարդակից 1100-1510մ բարձրությունների վրա: Տարածքի միջին բացարձակ բարձրությունը 1256 մետր է: Ռելիեֆը բարդ է: Քաղաքը շրջապատված է Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Հյուսիս-արևելյան մասերում նրան հարում են Բագումի, արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից՝ Փամբակի, արևելքից՝ Սուրդուզի և հարավ-արևելքից՝ Արեգունի անտառաշատ լեռները: Լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառներով, որոնք վերջանալով լեռնային կատարներին, փոխարինվում են ալպյան մարգագետիններով:

Դիլիջանը գտնվում է Երևանից 99 կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը: Լայն ճանաչում ունի «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրը: Դիլիջանը լեռնակլիմայական, բալնոլոգիական հայտնի առողջարան է: Դիլիջանի բուժառողջարարական ռեսուրսներն իրենց հատկություններով շատ մոտ են, իսկ որոշ ցուցանիշներով գերազանցում են Բորժոմիի, Կիսլովոդսկի, Եսենտուկիի և Պյատիգորսկի հանրահայտ առողջարաններին: Ներկայում աշխատանքներ են տարվում բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային զբոսաշրջության զարգացման ոլորտում քաղաքի երբեմնի ունեցած համբավի վերականգնման ուղղությամբ: Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի 2023թ, տեղեկագրի՝ Դիլիջան քաղաքում 2023թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմում է 17.1հազ. մարդ:

Այժմ քաղաքի բնակչությունը առավելապես միատարր է (ճնշող մեծամասնությունը հայերն են): Բնակչության հիմնական մասը զբաղված է բուսաբուծության, անասնապահության, արդյունաբերության, տրանսպորտի, առևտրի և սպասարկման ոլորտներում: Քաղաքի տնտեսության մասնագիտացված ուղղությունը հիմնականում սպասարկման ոլորտն է: Դիլիջանը, հանդիսանալով առողջարանային քաղաք, ունի մի շարք առողջարան-հանգստավայրեր: Համայնքում գործում են սննդի արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք զբաղվում են կաթնամթերքի, հանքային ջրերի արտադրությամբ: Դիլիջանի տարածքում կան 2 տասնյակ հանքային աղբյուրներ, որոնք ունեն երկաթ-հիդրոկարբոնատա-քլորիդ-նատրիումակալցիումական բաղադրություն: Առկա են նաև կահույքի, փայտամշակման, սննդի և թեթև արդյունաբերության, սարքավորումների, գորգագործական արտադրություններ: Դիլիջանում 1949թ.-ին կառուցվել է Դիլիջանի հիդրոէլեկտրակայանը: Դիլիջանի բնական լանդշաֆտներն անտառներն են, որը կազմում է 34.000 հա տարածք: Քաղաքն ունի էկոտուրիզմի զարգացման մեծ հնարավորություններ և արդեն որոշակի քայլեր են կատարվում դրանց իրականացման ուղղությամբ:

Դիլիջան համայնքը խոշորացվել է (ք.Դիլիջան, Աղավնավանք, Գոշ, Թեղուտ, Հաղարծին, Հովք, Խաչարձան) և զբաղեցնում է 625,25 հա տարածք: Համայնքը գազիֆիկացված է, ունի խմելու և ոռոգման ջրի խնդիր: Դիլիջան համայնքի հիմնախնդիրներից են մշակութային

կոթողների, առողջարանների և հյուրանոցների, ներքաղաքային ճանապարհների, կեղտաջրերի հեռացման, լուսավորության լուծումները, որոնք շատ կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանի զբոսաշրջության զարգացման համար:

**Թեղուտ բնակավայր.** Թեղուտ գյուղը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի տարածքում, մարզկենտրոն Իջևանից 28 կմ հարավ-արևմուտք, Դիլիջան-Իջևան ճանապարհի վրա, Աղստև գետի ձախափնյակում: Գյուղի մակերեսը 9,5 կմ քառակուսի է: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ, գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +19 C, ձմռանը՝ -2 C: Ունի բուժկետ, դպրոց, մշակույթի տուն:

Նկար 13



Թեղուտից 5 կմ հյուսիս, «Ճեռի հողեր» հանդամասում գտնվել են Հայոց թագավոր Արտաշես Ա-ի (189-160 մ.թ.ա.) թողած երկու սահմանաքարերը արամեերեն գրով: Թեղուտից մի քանի կիլոմետր հեռավորության վրա են գտնվում Հաղարծին և Ջուխտակ վանքերը: Գյուղից ոչ հեռու՝ անտառային գեղատեսիլ գոտում, գտնվում է Պարզ լիճը՝ Տավուշի մարզի կարևորագույն բնական հուշարձաններից մեկը:

Բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ, բանջարեղենի մշակությամբ:

Վիճակագրական կոմիտեի 2023թ, տեղեկագրի՝ Թեղուտ բնակավայրում 2023թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմում է 1440 մարդ:

**9. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման , փական փուլեր).**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում՝ 0.00192հա, 0.002հա, 0.0012հա տարածքների վրա:



9.1 Շահագործման փուլ. «Հաղարծին Էքստրիմ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեությունն իրականացվելու է՝ 0.00192հա, 0.002հա, 0.0012հա տարածքների վրա 51.2մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով հողատարածքի վրա: Զիփլայն ունենալու է 4 թձիչքակետ, երկու ուղղություններով, որոնց համապատասխան երկարություններ են.

- ✓ 1-ին ուղղություն՝ 241,432մ
- ✓ 2-րդ ուղղություն՝ 275,651մ

Տեղադրվող 4 թձիչքակետից առաջին ուղղությունը 1-2 թձիչքակետ է, երկրորդ ուղղությունը հետադարձ՝ 3-4 թձիչքակետ: Միաճուպան կախովի մարդատար ճուպանուղին ունենալու է 2 տարբեր ճուպանագիծ, ունենալու է 200-300մ բարձրություն: Այն աշխատելու է մեխանիկական ինքնահոս՝ իներցիոն եղանակով, առանց հոսանքի: Ճուպանները փոփոխվում են գետնին՝ 1-2 և 3-4 թձիչքակետերի միջև, այնուհետև համապատասխան սարքավորմամբ բարձրացվելու է վերև և հատուկ մասնագետների օգնությամբ ամրացվելու է:

Թձիչքի նկարագիրը. Բարձրությունների հաշվին 1 -ին թձիչքակետից ճուպանով ինքնահոս եղանակով տեղափոխվում են 2-րդ թձիչքակետ, որը ավելի ցածր է, 2-րդից ոտքով գնում են 3-րդ թձիչքակետ /50մ հեռավորություն/, այնուհետև ճուպանով, կրկին բարձրության հաշվին տեղափոխվում են ավելի ցածր՝ 4-րդ թձիչքակետ:

Զիփլայնի կառուցման համար տարածքում դեռևս խորհրդային տարիներից առկա են հենասյուններ, որոնք օգտագործվելու են ճուպանների ամրացման համար, փայտյա տախտակամած/հարթակ/՝ 4 հատ, 3x40x50մ և 3x30x30մ չափերի մետաղական բազրիքներ՝ 7 հատ, մետաղական ճուպաններ՝ Ø12մմ հաստության:

Շահագործման փուլում գործունեության տարածքում առանձին ավտոկայանատեղի չի նախատեսվում: Մեքենաները կայանվելու են տարածքում՝ ճանապարհի եզրերին:

Դեպի զիփլայն տանող տարածք մոտեցող ճանապարհը գրունտային է:

Տարածքում զբոսաշրջիկների ճիշտ կողմնորոշվելու համար՝ տեղադրվելու են ուղեցույց վահանակներ:

Նախատեսվող գործունեության նախագիծը կազմվել է ՀՀ-ում գործող նախագծային և շինարարական նորմերին համապատասխան: Նախագծային լուծումներում ապահովված են հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:

## 9.2 Շինարարության փուլ.

Գործունեության իրականացման ընթացքում շինհրապարակ չի նախատեսվում: Տեղադրվող կոնստրուկցիաները բերվելու են պատրաստի վիճակում և անմիջապես տեղադրվելու են, տարածքում դեռևս խորհրդային տարիներից առկա հենասյուների վրա: Շինանյութերի կուտակում ևս չի նախատեսվում, քանի որ վերջիններս բերվելու են հաջորդաբար՝ ըստ պահանջի: Գործունեության իրականացման ժամանակ առաջացած

ավելցուկային նյութերը տարածքում չեն կուտակվելու և նույն մեքենաներով Կապալառուի կողմից հետ է վերադարձվելու:

**Շինարարական տեխնիկա, տրանսպորտային միջոցներ.** գործունեության իրականացման փուլում նախատեսվում է օգտագործել հետևյալ տեխնիկա-տրանսպորտային միջոցները.

- Դանգրատ
- Բեռնատար
- Եռակցող սարք
- Ճախարակ
- Արգելակներ, կախոցներ
- Ձգող, կտրող, քաշող տարրեր
- Մեխանիկական սարքավորումներ, գործիքներ և այլն:

Շինտեխնիկական լինելու է ընկերության սեփական տեխնիկական կամ Կապալառու կազմակերպության մեքենաները: Մեքենաների կայանման վայրեր չեն նախատեսվում, քանի որ մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի, և կայանվելու են գործունեության տարածքին կից ճանապարհի եզրին:

**Հողային ռեսուրսներ.** նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ հողային աշխատանքներ չեն իրականացվելու, տարածքում առկա են խորհրդային տարիներից մնացած սյուներ, որոնց վրա տեղադրվելու են տախտակամածերը:

**Էլեկտրամատակարարումը** կատարվելու է դիզելային գեներատորի միջոցով: Զիփլայնը աշխատելու է միայն ցերեկային ժամերին, ուստի լուսավորության անհրաժեշտություն չկա:

**Աղբահեռացում.** շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ, որոնք կուտակվելու են պարկերի մեջ և տեղափոխվելու է կապալառու կազմակերպության կողմից:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմվելու է 60կգ/ամիս : Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու է 1 հատ մետաղյա կամ պլաստմասե աղբաման:

**Բարեկարգում, Կանաչապատում.** շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում, աղբի հեռացում:

**Ժամանակացույց.** Նախատեսվող գործունեության իրականացումը տևելու է առավելագույնը մեկ ամիս:

## 10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

10.1Ձուր. Շինարարության փուլում նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնական ռեսուրսներից օգտագործվելու միայն ջուր: Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու ջրի և կենցաղային կարիքները հոգալու համար: Շինարարության փուլում աշխատողների համար խմելու ջուրը կբերվի շշերով՝ ըստ պահանջի:

Շինարարության ընթացքում աշխատելու են 6 աշխատող, որից 1 ԻՏՈ:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\text{Է.ի.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T$ , որտեղ

$n$  – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ

$N$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 25 մարդ

$N_1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

$T$  – աշխատանքային օրերի թիվն է՝ 26օր:

$W_{\text{ի.տ.}} = (1 \times 0.016 + 5 \times 0.025) \times 26 = 3,66$  մ<sup>3</sup>/շին. ժամ. կամ 0,141մ<sup>3</sup>/օր:

Շինարարության փուլում շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը կկազմի 3,66մ<sup>3</sup>/շին. ժամ կամ 0,141 մ<sup>3</sup>/օր:

**Կեղտաջրեր.** Շինարարության փուլում կեղտաջրեր չեն առաջանալու աշխատողները օգտվելուն են հարակից տարածքում առկա զուգարանից:

**10.2 Նյութեր.** շինարարության ընթացքում օգտագործվելու են.

- փայտ
- բետոնանյութ
- մետաղական ճոպաններ
- պողպատ

Օգտագործվելու է B20 տիպի բետոն՝ գոյություն ունեցող կանգնակների ամրացման նպատակով: Այն բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպություններից՝ բետոնախառնիչ մեքենաներով:

Շինանյութերը կտեղադրվեն տակդիրների վրա: Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի նյութերով, որոնք չեն վնասի շրջակա միջավայրին: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը, չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

## 11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Հաղարծին վանական համալիր տանող ճանապարհի հարակից հատվածում, որն արդեն իսկ որոշակի ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի

նյութերով, որոնք չեն վնասի շրջակա բնությանը: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն այնպիսին, որպեսզի լինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող բնությանը և լանդշաֆտին՝ չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների, ինչպես նաև շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում մարդու առողջության և անվտանգության հետ:

Նախատեսվող գործունեության շրջանակներում ծառահատումներ չեն կատարվելու: Զիփլայնի նախագծային լուծումները նախատեսված են այնպես, որպեսզի շրջանցվեն գոյություն ունեցող ծառերը, չվնասվեն տարածքում առկա ծառերը և թփերը:

Գործունեության ավարտից հետո զիփլայն անցնելու է տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, կստանա համապատասխան վկայագիր: Այն կշահագործվի համապատասխան դրական եզրակացության առկայության դեպքում:

Ազգային պարկի ներկայիս հնարավորությունների օգտագործումը՝ ներքին այցելուներին և օտարերկրացի զբոսաշրջիկներին հյուրընկալելու առումով, կնպաստի Դիլիջանի համայնքում զբոսաշրջային հնարավորությունների զարգացմանը:

Գործունեության իրականացումն ունենալու է տարածաշրջանի համար որոշակի դրական ազդեցություն, քանի որ հանգստյան գոտու կազմակերպումը կխթանի էկոտուրիզմի, զբոսաշրջության զարգացմանը, հետևաբար և համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

Շինարարական աշխատանքները /հիմնականում հավաքովի սարքավորումներով/ կրելու են կարճաժամկետ բնույթ: Գործունեության իրականացումն չի առաջացնելու է լանդշաֆտի ծանրաբեռնվածություն: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված հաշվետվությունում նախատեսվող միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ հնարավոր ազդեցությունները կլինեն նվազագույնը:

**11.1 Օդային ավազան.** գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան փոշու տեսքով հնարավոր արտանետումներ չեն լինելու, քանի որ հողային աշխատանքներ չեն կատարվելու: Հնարավոր է արտանետում լինելու է ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի տեսքով, որը լինելու է կարճաժամկետ՝ 1 ամիս: Քանի որ մեքենան աշխատելու է ոչ ամենօր, ուստի արտանետումները լինելու են աննշան, ուստի արտանետումների հաշվարկ չի կատարվում: Գործունեության տարածքը գտնվում է բնակավայրերից և հանգստյան տներից բավական հեռավորության վրա. ուստի աննշան արտանետումները չեն կարող վնաս հասցնել բնակչությանը:

Շահագործման փուլում օդային ավազան արտանետումներ չեն նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

**11.2 Հողային ռեսուրսներ.** գործունեության իրականացման հետևանքով հողային աշխատանքներ չեն կատարվելու, նկատի ունենալով, որ զիփլայնի կառուցման նպատակով, դեռևս խորհրդային տարիներին տեղադրվել են համապատասխան հենասյուներ, կառուցվել համապատասխան կայաններ, որոնք ընկերության կողմից կվերակառուցվեն, կամրացվեն՝ համաձայն ներկայացված նախագծի:

**11.3 Ջրային ռեսուրսներ.** Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում:

**Կեղտաջրերի հեռացման համար.** Հողային և ջրային ռեսուրսները կեղտաջրերի աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է որպես զուգարան օգտագործել հարակից տարածքի հանգստյան գոտում առկա հասարարական զուգարանը:

**11.4 Կենսաբազմազնություն.**

Գործունեության ենթակա տարածքը ծառապատ է՝ խոտածածկով: Գործունեության ենթակա տարածքում համապատասխան մասնագետի՝ ՀՀ ԳԱԱ Ա.Լ.Թախտաջյանի անվան Նուսաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող կ.գ.թ. Մ. Սարգսյանի, կողմից կատարվել է ուսումնասիրություն: Հավելված 11:

Կառուցվող 4 թռիչքակետերից թիվ 1-ը և թիվ 4-ը տեղակայվելու են ժայռոտ հատվածում, ուր բացակայում են դենդրոֆլորայի ներկայացուցիչները, հարևան ժայռային բացվածքների վրա առկա է պետրոֆիլ բուսականություն: Հարևանությամբ ոչ մեծ տարածք է զբաղեցնում տերևային նոսրանտառը: Թիվ 2 և 3 թռիչքակետերը տեղակայվելու են կիրճի հանդիպակաց լանջին, որը ներկայացված է կաղնու-բոխու անտառով: 2-րդ թռիչքակետից դեպի 3-րդը լինելու է բնական արահետ, ճանապարհների կառուցում չի նախատեսվում, ուստի բուսականության վրա ազդեցությունը լինելու է մինիմալ: 1 և 4 թռիչքակետերի հարևանությամբ՝ հյուսիսային կողմում, կա տերևավոր նոսրանտառի մի հատված: Այստեղ հանդիպում է Թիսկի վրացական (*Acer ibericum*), Դժնիկ քաղցր (*Rhamnus pallasii*), Ջկոենի սովորական (*Mespilus germanica*), Սզնի կեղծ հովհարատերև (*Crataegus pseudoheterophylla*), Գերիմաստի սովորական (*Viburnum lantana*), մաւրենի (*Rosa sp.*): Այստեղ մեկ առանձնակով ներկայացված է Գիհի երկարատերևը (*J. oblonga*):

Նկար 14



Թխկի դաշտային



Բոխի արևելյան



Երեքնուկ մարգագետնային

### Կաղնի խոշորատեջ

Զիալայն կառուցելու համար հայցվող տարածքում հանդիպում են կենդանական աշխարհի հետևյալ ներկայացուցիչները՝

*Անողնաշարավորներ.* բզեզներ, թիթեռներ, մրջյուններ:

*Երկկենցաղներ և սողուններ.* Սողուններից այս տարածքում հանդիպում են են ճարպիկ մողեսը (*Lacerta agilis*), շերտավոր մողեսը (*L. strigata*), սովորական լորտուն (*Natrix natrix*):

*Թռչուններ.* Թռչուններից հանդիպում են անտառային աղավնին (*Columba palumbus*), եղնշաթոչնակը (*Troglodytes troglodytes*), անտառային նրբագեղիկը (*Prunella modularis*), սև կեռնեխը (*Turdus merula*), անտառային կաչաղակը (*Garrulus glandarius*), մեծ ճուռակը (*Buteo buteo*), ոսպնուկը (*Carpodacus erythrinus*), ժայռային ճնճղուկը (*Petronia petronia*) և այլն:

*Կաթնասուններ.* Կաթնասուններից այստեղ հանդիպում են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), փոքր անտառային մուկը (*Apodemus uralensis*), պարսկական կամ կովկասյան սկյուռը (*Sciurus anomalus*), գորշ արջը (*Ursus arctos*), այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*), աղվեսը (*Vulpes vulpes*), գայլը (*Canis lupus*), գորշուկը (*Meles canescens*), աքիսը (*Mustela nivalis*) և այլն:



Ըստ դաշտային հետազոտությունների, մասնագիտական գրականության և հերքաբիումային նմուշների տվյալների համադրմամբ և նույնականացմամբ հաստատված է, որ Տավուշի մարզում Թեղուտ համայնքի հարևանությանը զիփլայնի կառուցման համար նախատեսված հայցվող տարածքում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ կարմիր գրքում կամ ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են:

Տարածքում կենդանիների ցամաքային միգրացիոն ուղիներ չեն հայտնաբերվել: Չեն հայտնաբերվել նաև վերգետնյա կենսակերպ ունեցող և գետնափոք կենդանիների և թռչունների բներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքները իրականացվելու են համեմատաբար փոքր տարածքում, չի խախտվելու բնական լանդշաֆտը, և գորշ արջի համար չի լինելու տեղաշարժի խոչնդոտ:

Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու: Զիփլայնի լուծումները նախագծվել են, հաշվի առնելով տարածքում առկա ծառերի պահպանման անհրաժեշտությունը:

Գործունեության իրականացումը տարածքի կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություն չի ունենալու:

**11.5 Թափոններ.** նախատեսվող գործունեության կատարման ժամանակ շինարարական աղբ չի առաջանալու, քանի որ ավելացված նյութերը Կապալառու կազմակերպությունն ամենօր տեղափոխելու է, իսկ տեղադրվող ճուպանները Կապալառու կազմակերպությունը բերելու է պատրաստի վիճակում: Օգտագործվող նյութերը մատակարարվելու է ըստ օրվա պահանջի:

Շինարարության և շահագործման փուլերում առաջանալու է միայն կենցաղային աղբ:

• Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4)՝ 60կգ/ամիս, շահագործման փուլում՝ 240կգ/օր:

• Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ, որն ամենօր հեռացվելու է տարածքից: Շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը կուտակվելու է տարածքում տեղադրվող 2 հատ 1,1մ<sup>3</sup> տարողության համապատասխան աղբի տարրաներում: Այն պարբերաբար հեռացվելու է մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է,

հետևաբար,

$$M=6*120=720 \text{ կգ/տարի,}$$

Սակայն շինարարությունը տևելու է մեկ ամիս /26 աշխատանքային օր/, հետևաբար,

$$M = 720 : 12 = 60 : 26 \text{ կգ շինարարության ժամանակ՝ օրական 2,3կգ:}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը 8 աշխատողի համար կազմի.

$$M = 8 * 360 = 2880 \text{ կգ/տարի կամ } 240 \text{ կգ/ամիս} - 8 \text{ կգ/օր:}$$

#### 11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Զիփլայնի կառուցման ընթացքում որոշակի հատված անցնելու է Հաղարծին վանական համալիրի տարածքով, որի վերաբերյալ ԿԳՄՄ նախարարությունը տվել է իր համաձայնությունը՝ հավելված 6:

Գործունեության իրականացման ընթացքում այլ պատմամշակութային արժեքների հետ համընկնում չի լինելու, ուստի գործունեությունը բացասական ազդեցություն չի ունենալու վերջիններիս վրա:

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

#### 11.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ԶԶ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ԶԶ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՐՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒԽՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ԶԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒԽՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑՎՊՈՒՄՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒԽՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ԶԱՍԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ԶԶ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ԶԶԸՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ԶԱՍԱՏԵԼՈՒ ԵՎ ԶԱՅԱՍԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԶՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ԶՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 90 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Աշխատելու է մեկ բեռնատար մեքենա՝ ոչ անընդմեջ, քանի որ այն օգտագործվելու է տարածք նյութերը տեղափոխելու համար: Բացի այդ գործունեության ենթակա տարածքը գտնվում է անտառային գոտում՝ մոտակա բնակավայրից 3.6կմ, հանգստյան տներից մոտ 300մ հեռավորությունների վրա: Ուստի աղմուկի հաշվարկ չի ներկայացվում: Միաժամանակ հաշվետվությունում նախատեսվում են աղմուկի մեղմմանն ուղղված համապատասխան միջացառումներ, որոնց կիրառման արդյունքում կիրառման արդյունքում աղմուկի մակարդակը չի հասնի բնակավայրերին:

Շահագործման փուլում աղմուկ չի առաջանալու, ելնելով գործունեության բնույթից:

#### 11.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացում կապված՝

- հրդեհների, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու ուժեղացում, փոթորիկ) առաջացման և փոփոխության,
- շահագործվող մեքենաների,
- աշխատանքի ընթացքում հնարավոր վթարային իրավիճակների առաջացման հետ:

#### 11.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը. (Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն)

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և անվտանգությանը սպառնացող վտանգներ, կապված՝ հնարավոր վթարների, ոչ բավարար աշխատանքային պայմանների, թափոնների կառավարման, նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման, արտակարգ իրավիճակների առաջացման, մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շահագործման փուլում մարդու առողջության հիմնական վտանգը կապված է զիփլայնի անվտանգ աշխատանքի հետ:

Համապատասխան միջացառումների կիրառման արդյունքում հնարավոր ազդեցություններ կնվազեն:

11.10 Սոցիալական. շինարարության ժամանակ աշխատելու են 6 մարդ, որից 2 ինժեներ՝ մասնագետներ և բանվորներ՝ 4 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի սոցիալական ազդեցություններ կապված.

- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների տեղաշարժից:

**Շահագործման փուլում** գործունեության իրականացումն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն, նպաստելով.

- տարածքում զբոսաշրջության նոր հնարավորությունների ստեղծմանը, որը կխթանի բնակչության որոշակի խավերի եկամուտների ավելացմանը, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

11.11 Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում. Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ գործունեության իրականացման ժամանակ ծառահատումներ, լանդշաֆտի փոփոխություններ չեն կատարվելու: Ճոպաններն անցկացվելու են գոյություն ունեցող բետոնյա հենասյուններից:

Նախատեսվող գործունեության շինարարական փուլի ավարտից հետո կատարվելու է ամբողջ տարածքի բարեկարգում: Տարածքը մաքրվելու է ավելորդ աղբից և վերականգնվելու է լանդշաֆտը:

## **12.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան)**

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու կառուցապատման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, կենսաբազմազանության, մարդու առողջության պահպանման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման հետ: Հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագիրը ներկայացվում է նաև Բնապահպանական կառավարման պլանով՝ աղյուսակային տեսքով:

12.1.Օդային ավազան. Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվելու է.

- օգտագործվող տեխնիկան, տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, բացառելով անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,

- տրանսպորտային միջոցների շարժը կազմակերպել՝ չխոչընդոտելով ճանապարհային երթևեկությանը,

- նվազագույնի հասցնել տարածքում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը,

- բացառել տարածքում թափոնների բաց այրումը:

### 12.2. Հողային ռեսուրսներ.

- հնարավորինս բացառել տարածքի հողային ռեսուրսի վրա հնարավոր բացասական ազդեցությունները՝ հոսքաջրերով և թափոններով աղտոտումը,

- բացառել գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասերը,

- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,

- շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկական կայանվելու է գրունտային ճանապարհի եզրին,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում:

### 12.3. Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլում ջրցան չի նախատեսվում, քանի որ հողային աշխատանքներ չի նախատեսվում:

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շշերով),

- տրանսպորտային միջոցների սպասարկումը կկատարվի համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,

- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու, ինչպես նաև հողածածկը և ճանապարհի ասֆալտածածկը չվնասելու համար:

#### **Կեղտաջրերի հեռացում.**

- շինարարության և շահագործման փուլում՝ կեղտաջրեր չեն առաջանալու, աշխատողները և այցելուները օգտվելու են հարակից տարածքում առկա հասարակական գույքաբանից:

### 12.4. Կենսաբազմազանություն.

Գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները:

Բուսական աշխարհի պահպանման նպատակով նախատեսվում է.

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնելու է «Դիլիջան»ԱՊ-ին,

- բուսատեսակները տեղափոխելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի՝ ԱՊ-ի համաձայնությամբ,

- բացառել ծառահատումները, բնական ռելիեֆի արհեստական փոփոխությունը,

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

**12.5.Թափոններ.** Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,

- առաջացող թափոնները կհավաքվեն համապատասխան տարաների կամ պոլիէթիլենային պարկերի մեջ, կտեղափոխվեն Կապալառուի կողմից,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պլաստմասե աղբահավաք տարողությունների կամ պոլիէթիլենային պարկերի մեջ,

- բացառել աղբի կուտակումը կանաչապատ տարածքներում,

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 2 հատ 1,5x1մ<sup>3</sup> տարողության պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ: Կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

**12.6. Պատմամշակութային հուշարձաններ.**

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

**12.7. Աղմուկ և թրթռում.**

Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- կատարվող աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել է ցերեկային ժամերին,



- տրանսպորտային միջոցներն օգտագործել սարքին վիճակում,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները:

**12.8.Արտակարգ իրավիճակներ.**

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- ճուշանուղու մոնտաժումը պետք է կատարվի պատրաստող գործարանի կամ մասնագիտացված կազմակերպության կողմից,
- ապահովել ճուշանուղու կառույցների հիմքերի գետնի մակերևույթից նորմատիվային բարձրությունը,
- ճուշանուղու կառուցման ժամանակ պետք է կիրառվեն միայն նոր պատրաստված ճուշաններ,
- ճուշանուղիներում կիրառվող պողպատե ճուշանները պետք է լինեն չլորվող և իրենց մեխանիկական ու որակական բնութագրերով համապատասխանեն տեխնիկական պայմանների պահանջներին՝ հաստատված պատրաստող գործարանների հավաստագրերով,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

**Շահագործման փուլ.**

- ճուշանուղին/զիփլայն/ պետք է համապատասխանի ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. հունիսի 18-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագրին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 594-Ն հրամանի պահանջներին:

- Կախովի ճուշանուղու հենարանի վրա պետք է տեղակայված լինի քամու արագության մասին ազդանշան հաղորդող հողմաչափ:

- Զիփլայնը պետք է ապահովված լինի խոսակցական կապով:

- Տեղադրվելու են լուսային ազդանշաններ՝ թռիչքակետերի վրա, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար:

**12.9.Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.**

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա,

